

*Շրջակա միջավայրի նախարարության*

*«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ*

---

*ԱԳՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ*

*ՏԵՂԵԿԱԳԻՐ*

*2023*

---

*Հունիս երրորդ տասնօրյակ*

*Տեղեկագիրը կազմել է ագրոօդերևութաբանության բաժինը՝ մասնագիտացված ագրոօդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:*

*Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան*

## ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Հունիսի երրորդ տասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում եղել է նորմային մոտ դրական և բացասական շեղումով:*




*Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են հունիսի 26-ին. Տավուշում գրանցվել է +26…+30$^{0}$C (Բագրատաշեն՝ +32$^{0}$C), Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ +23…+25$^{0}$C, նախալեռնային շրջաններում՝ +33…+35$^{0}$C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +32…+34$^{0}$C, նախալեռնային շրջաններում՝ +25…+26$^{0}$C, Շիրակում՝ +23…+28$^{0}$C, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +23…+26$^{0}$C, նախալեռնային շրջաններում՝ +28…+30$^{0}$C, Գեղարքունիքում՝ +20…+25$^{0}$C, Լոռիում՝ +23…+28$^{0}$C, Արմավիրում՝ +33...+34$^{0}$C, Արարատում՝ +32…+34$^{0}$C, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ +22…+23$^{0}$C, նախալեռներում՝ +28…+32$^{0}$C:*

*Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են հունիսի 25-ին. Տավուշում գրանցվել է +14…+15$^{0}$C(Դիլիջան՝ +9$^{0}$C), Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ +6…+8$^{0}$C, նախալեռնային շրջաններում՝ +13…+15$^{0}$C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +13...+17$^{0}$C, նախալեռնային շրջաններում՝ +8…+10$^{0}$C, Շիրակում՝ +4…+8$^{0}$C, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +7...+8$^{0}$C, նախալեռնային շրջաններում՝ +11…+13$^{0}$C, Գեղարքունիքում՝ +6…+9$^{0}$C, Լոռիում՝ +5…+10$^{0}$C, Արմավիրում՝ +12...+15$^{0}$C, Արարատում՝ +13...+15$^{0}$C, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ +3...+6$^{0}$C, նախալեռներում՝ +10...+13$^{0}$C:*




*Տասնօրյակի ընթացքում տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 35-47մմ (145-188%) Լոռիում՝ 38-59մմ (130-239%), Տավուշում՝ 45-83մմ (246-413%), Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ 55-57մմ (173-194%), նախալեռներում՝ 22-57մմ (173-240%), Գեղարքունիքում՝ 29-54մմ (124-234%), Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 45-62մմ (202-236%), նախալեռներում՝ 21.5մմ (187%), Արմավիրում՝ 14-28մմ (161-446%), Արարատում՝ 9-37մմ (109-583%), Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ 41մմ (219%), նախալեռներում՝ 15մմ (147%), Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ 3-16մմ (53-171%), նախալեռներում՝ 35-53մմ (164-226%):*




*Հունիսի երրորդ տասնօրյակում հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները լեռնային շրջաններում գրանցվել են +3...+6$^{0}$C, Արարատյան դաշտում, Արագածոտնի, Վայոց ձորի և Տավուշի նախալեռներում՝ +8...+13$^{0}$C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +16$^{0}$C ասփիճան:*

## *Վեգետացիոն ցուցիչի արժեքն ըստ արբանյակային տվյալների*

## *(հունիս երրորդ տասնօրյակ)*




*Գյուղատնտեսության վրա ազդող երաշտի հայտնաբերման և վերահսկման համար օգտագործվող բուսականության առողջության ինդեքսի արբանյակային պատկերը ցույց է տալիս, որ հունիսի երրորդ տասնօրյակում հանրապետության շրջանների մեծ մասում վեգետացիոն ցուցիչը պահպանել է իր առավելագույն արժեքը: Հանրապետության շրջանների զգալի մասում բուսականությունը գտնվել է լավ վիճակում, բացառությամբ որոշ հովտային շրջանների:*

***Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ***

Արագածոտն




Արմավիր




Արարատ




Գեղարքունիք



Կոտայք



Լոռի



Շիրակ



Սյունիք



Տավուշ



Վայոց Ձոր



Երևան



***Հացահատիկային մշակաբույսեր***

*Հովտային շրջաններում շարունակվել է աշնանացան ցորենի մոմային հասունացումը, որոշ շրջաններում կատարել են բերքահավաք՝ (Մերձավան, Արարատ):*

*Նախալեռնային շրջաններում սկսվել է աշնանացանի մոմային հասունացումը, բույսի բարձրությունը կազմել է 86-103սմ, առանձին լեռնային շրջաններում սկսվել է աշնանացան ցորենի կաթնային հասունացումը: Գարնանացան գարին գտնվել է ցողունի ներքին հանգույցների առաջացման փուլում:*



*Նախալեռնային շրջաններում շարունակվել է եգիպտացորենի յոթերորդ տերևի առաջացումը: Բույսի բարձրութունը տասնօրյակի վերջում հասել է 80 սմ-ի:*



***Պտղատուներ, Խաղող***

*Հովտային շրջաններում շարունակվել է պտղատուների հասունացումը և բերքահավաքը, նախալեռնային և լեռնային շրջաններում՝ հնդավորների պտղի ձևավորումը:*

*Հովտային և նախալեռնային շրջաններում շարունակվել է խաղողի վազի ծաղկումը:*
*Խաղողի դրության գնահատականը լավ է:*

***Բանջարանոցային մշակաբույսեր, կարտոֆիլ***



*Հովտային շրջաններում դիտվել է բանջարանոցային մշակաբույսերի առաջին ծաղիկների թառամումը:*
*Լեռնային շրջաններում կարտոֆիլը ծաղկել է: Առաջացել է կաղամբի 1-ին, տեղ-տեղ 3-րդ տերևը:*



***Ծիախոտ և խոտաբույսեր***

*Նախալեռնային շրջաններում դիտվել է ծիախոտի 5-րդ տերևի առաջացումը:Առվույտը ծաղկել է: Ծիախոտի և խոտաբույսերի դրության գնահատականը լավ է:*